ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

հոկտեմբերի 2024 թվականի №-Ա

«ԶԵՆԻԹ ԷՆԵՐՋԻ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԳՈՒՄԱՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒՆ ՊԱՐՏԱՎՈՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2023 թվականի մայիսի 17-ի №158-Ա որոշմամբ «ԶԵՆԻԹ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրված «Զենիթ Սոլար» արևային էլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0734 լիցենզիայի (այսուհետ՝ ԼԷ №0734 լիցենզիա) պայմանների 14-րդ կետի համաձայն՝ Ընկերությունը պարտավոր էր մինչև 2024 թվականի հունվարի 18-ը Հանձնաժողով ներկայացնել Կայանի կառուցման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած նախագիծը՝ դրական փորձագիտական եզրակացություններով (այսուհետ՝ Նախագիծ), սակայն չի ներկայացրել, որի հետևանքով նշված ժամկետը, Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374-Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի (այսուհետ՝ Կարգ) 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, համարվել է երկարաձգված մինչև 2024 թվականի սեպտեմբերի 18-ը,

բ) Ընկերությունը մինչև 2024 թվականի սեպտեմբերի 18-ը Հանձնաժողով չի ներկայացրել Նախագիծը, ուստի Հանձնաժողովը՝ հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, սույն թվականի սեպտեմբերի 23-ից հարուցել է վարչական վարույթ՝ Կարգի №3 հավելվածի 7-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն Ընկերության ներկայացրած երաշխիքով սահմանված գումարի կեսը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու հարցի ուսումնասիրության նպատակով, որի վերաբերյալ

Ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի 2024 թվականի սեպտեմբերի 23-ի №ԳԲ/34.3-Մ2-12/4489-2024 գրությամբ,

գ) Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ արտադրության լիցենզիա ունեցող անձի կողմից լիցենզիայով ամրագրված ժամկետում Նախագիծը Հանձնաժողով չներկայացնելու դեպքում նշված ժամկետը համարվում է երկարաձգված նախկին ժամկետի չափով, բայց ոչ ավելի, քան մինչև լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածի ավարտը, իսկ 2-րդ անգամ երկարաձգվելու դեպքում՝ Կարգի №3 հավելվածի համաձայն՝ երաշխիքով սահմանված գումարի կեսը փոխանցվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե,

դ) Կարգի №3 հավելվածի 7-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշում է ընդունում երաշխիքով սահմանված գումարի կեսը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու մասին, եթե արտադրության լիցենզիա ունեցող անձի կողմից Նախագիծը Հանձնաժողով ներկայացնելու՝ լիցենզիայի պայմաններով ամրագրված ժամկետը Կարգի համաձայն 2-րդ անգամ երկարաձգվել է,

ե) Ընկերությունը վարչական վարույթի շրջանակում ուսումնասիրվող հարցի առնչությամբ փաստարկներ և հիմնավորումներ չի ներկայացրել,

զ) վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը ԼԷ №0734 լիցենզիայի պայմանների 14-րդ կետով սահմանված և երկարաձգված ժամկետում՝ մինչև 2024 թվականի սեպտեմբերի 18-ը, Նախագիծը չի ներկայացրել Հանձնաժողով, և

հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետը և №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 7-րդ կետի 2-րդ ենթակետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Պարտավորեցնել Ընկերությանը՝ Նախագիծը Հանձնաժողով ներկայացնելու՝ ԼԷ №0734 լիցենզիայի պայմաններով ամրագրված ժամկետը Կարգի համաձայն 2-րդ անգամ երկարաձգված համարվելու համար, սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝
   1) մեկամսյա ժամկետում «ԻՆԵԿՈԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության 2023 թվականի ապրիլի 18-ի №G2444 գրությամբ ներկայացված EA23/00308 երաշխիքի համաձայն երաշխավորված 15 000 000 (տասնհինգ միլիոն) դրամ գումարից 7 500 000 (յոթ միլիոն հինգ հարյուր հազար) դրամը 900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.

2) քառասունհինգօրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել 15 000 000 (տասնհինգ միլիոն) դրամ գումարի երաշխիք՝ առնվազն մինչև 2025 թվականի հուլիսի 2-ը գործողության ժամկետով:

2. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ.
   1) Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ ԼԷ №0734 լիցենզիայի պայմանների 14-րդ կետով սահմանված՝ Նախագծի ներկայացման ժամկետը համարվել է 2-րդ անգամ երկարաձգված մինչև 2025 թվականի մայիսի 18-ը.
   2) Կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ 2-րդ անգամ երկարաձգված ժամկետում Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած՝ դրական փորձագիտական եզրակացություններով, Կայանի կառուցման նախագիծը Հանձնաժողով չներկայացնելու դեպքում ԼԷ №0734 լիցենզիայի գործողությունը կկասեցվի:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը, բացառությամբ՝ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքով նախատեսված դեպքերի:
4. Սույն որոշումը սահմանված ժամկետում կամովին չկատարվելու դեպքում ենթակա է հարկադիր կատարման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **Ս. ԱՂԻՆՅԱՆ**

ք. Երևան
հոկտեմբերի 2024թ.